

## Ն ա խ ա բ ա ն

Գները և գների ինդեքսները Հայաստանի Հանրապետությունում, 2011թ. վիճակագրական ժողովածուն պարունակում է գների և գների ինդեքսների մասին առավել ամբողջական վիճակագրական ցուցանիշներ, որոնք կարող են լուսաբանել գնային փոփոխությունների հետ կապված ՀՀ տնտեսության տարբեր ոլորտներում տեղի ունեցած գործընթացները:

Ժողովածուն պարունակում է վերջին հինգ տարում, առանձին դեպքերում նաև ավելի երկար ժամանակահատվածում, հանրապետության սպառողական շուկայում, արդյունաբերությունում, գյուղատնտեսությունում, շինարարությունում, արտաքին առևտրում, բեռնափոխադրումների գծով գների և սակագների մակարդակի ու փոփոխությունների մասին վիճակագրական տվյալներ: Առանձին ցուցանիշների գծով կատարվել են նաև միջազգային համադրումներ և համեմատություններ:

Տեղեկատվությունը ներկայացվում է, ինչպես Հայաստանի Հանրապետությունով, այնպես էլ ՀՀ առանձին մարզերով (դիտարկվող բնակավայրերով), տնտեսության տարբեր ոլորտներով, ապրանքային խմբերով ու ապրանք-ծառայության տեսակներով:

Տվյալները հաշվարկված են արդի մեթոդաբանության սկզբունքներին համապատասխան, ինչը հնարավորություն է տալիս դրանք համադրել միջազգային համանման ցուցանիշների հետ: <<Միջազգային համեմատություններ>> բաժնի (էջ՝ 105) աղյուսակները համապատասխան ցուցանիշներով կազմված են ըստ ԱՊՀ միջպետական վիճակագրական կոմիտեի տվյալների:

Գների դիտարկման և գների ինդեքսների հաշվարկման մեթոդաբանական պարզաբանումները բերված են առանձին հատվածով:

Ժողովածուն նախատեսված է լայն սպառողների՝ պետական կառավարման մարմինների, գիտական և ուսումնական հաստատությունների, տնտեսագետների, կազմակերպությունների և այլ սպառողների համար:

### Պայմանական նշաններ

... դիտարկման պահին ապրանքատեսակը (ծառայության տեսակը) բացակայել է  
- գների դիտարկում կամ ինդեքսների հաշվարկ չի կատարվել  
" տվյալները ճշգրտվել են

### Օգտագործված համառոտագրություններ

մ	մետր	տ	տոննա
մ <sup>2</sup>	քառակուսի մետր	կմ	կիլոմետր
մ <sup>3</sup>	խորանարդ մետր	կվտ/ժ	կիլովատ/ժամ
լ	լիտր	տ/կմ	տոննա/կիլոմետր
կգ	կիլոգրամ	հա	հեկտար
գր	գրամ		

Առանձին դեպքերում բաղադրիչների գումարի և արդյունքների միջև աննշան տարբերությունները բացատրվում են տվյալների կլորացմամբ:

Ծանոթություն.

- ՀՀ-ում շինարարության գների ինդեքսների հաշվարկը կատարել է ՀՀ քաղաքաշինության նախարարությունը, իսկ շղթայական և երկարաժամկետային ինդեքսների հաշվարկը՝ ՀՀ ԱՎԾ աշխատակազմի գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժինը՝ ՀՀ քաղաքաշինության նախարարության կողմից ներկայացված ինդեքսների հիման վրա: